ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 23-ը հոկտեմբերի 2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետի ՊԺԿ, գնդապետ Զ. Մելիքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոկտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Է. Սարգսյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <Գիլոյան Եղբայրներ> ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:
1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 23.10.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <Գիլոյան Եղբայրներ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Զ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան